№ 36 Մարտի 9 (21) 1879 Մարտի 9 (21) № 36

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։

Թիֆլիսում դրվում են մխիթարեան խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուզղակի Тифлисъ. Редакція „Մշակ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

կաթոլիկ հայերի աղօթատունը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Մօզդօկից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Բելգիա։ Թիւրքիա։—«Մշակի» հեռագիրները։—Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Հայ կինը։

ԿԱԹՕԼԻԿ ՀԱՅԵՐԻ ԱՂՕԹԱՏՈՒՆԸ

Երբ հիմնվեցաւ Թիֆլիսում հայ-կաթոլիկների աղօթատունը, սկզբից նրա մէջ ամբողջ ժամասացութիւնը կատարվում էր հայերէն լեզուով։ Փոքր առ փոքր մեր կաթոլիկ հայերը խորշելով իրանց ազգութենից, սկսեցին իրանց ոչ թէ հայ, այլ վրացի անուանել, թէև նրանց մէջ ոչ մի վրացի երբէք չը կար և մինչև այժմ ամբողջ Թիֆլիսում ոչ մի վրացի կաթոլիկ չը կայ,—նրանք սկսեցին մոցնել իրանց ժամասացութեան մէջ վրաց լեզուն։ Երբ բազմացան Թիֆլիսում լեհացիները, ֆրանսիացիները, իտալացիները և կաթոլիկ գերմանացիները, նոյն եկեղեցու ժամասացութեան մէջ մոցնվեցաւ և լատինական լեզուն։

Այսպիսով Թիֆլիսի կաթոլիկ աղօթատան մէջ տիրապետում են այժմ երեք լեզուներ՝ լատինները, վրացիները և հայերէնը, թէև կաթոլիկներից ոչ մինը չէ ուզում խոստովանվել թէ հայ է։

Վերջապէս հռոմէական կաթոլիկները ուզեցին ունենալ իրանց սեփական կաթոլիկ աղօթատուն, որտեղ ժամասացութեան մէջ գործածվէր միմիայն լատինական լեզուն։ Նրանք հասան իրանց նպատակին։ Թոյլտուութիւն ստանալով կառավարութենից, նրանք դրամական միջոցներ ժողովեցին և հիմնեցին իրանց սեփական եկեղեցի Թիֆլիսի Կուկիա անուանված թաղում։

Վերջին ժամանակները հայ կաթոլիկների թիւը Թիֆլիսում սկսեց աճել։ Էջմիածնից, Էխալցխայից և ուրիշ գաւառական քաղաքներից մեր քաղաքը եկած կաթոլիկ հայերի թիւին աւելացան այն կաթոլիկ հայերը, որոնք զանազան գործերով մեծ բազմութեամբ գալիս են այժմ Կովկասեան մայրաքաղաքը Պետերբուրգին միացած նոր նահանգներից։

Եւ այդ կաթոլիկ հայերը մոլորված ճանապհին։ Նրանք ամբողջ Թիֆլիսում չունեն մի աղօթատուն, որտեղ եկեղեցական ժամասացութիւնը կատարվէր իրանց մայրենի լեզուով։ Նրանք ստիպված են գնալ կամ լատինական կաթոլիկ եկեղեցի, կամ վրաց կաթոլիկ եկեղեցի։

Ընդ երկրում, որտեղ զետեղված են հայ-կաթոլիկները, նրանք իրանց եկեղեցական ծէսերը և արարողութիւնները իրանց մայրենի լեզուով են կատարում։ Հայ-կաթոլիկ եկեղեցին ամեն տեղ պահպանեց իր ազգային յատկութիւնը. ոչ մի տեղ հայ-կաթոլիկները չեն մոցրել իրանց եկեղեցու ժամասացութեան մէջ լատինական կամ մի այլ լեզու....

Հակառակը պատահեց միմիայն Թիֆլիսում։ Ընհասարակ ամեն դաւանութեան Թիֆլիսցի հայը մեծ հակումն ունի դէպի իր ազգութեան ուրանալը....

Հայկական կաթոլիկ հանդիսացաւ բուն Թիֆլիսցի հայ.... Հայց, ինչպէս ասացինք, օտարաքաղաքացի կաթոլիկ հայերը այժմ մոլորված ճանապհին, չունենալով իրանց սեփական աղօթատուն, զրկված մայրենի լեզուով կատարված եկեղեցական ժամասացութենից։

Մենք լսում ենք որ այդ տեսակ խառն ու շփոթ դրութեանը չը դիմանալով, Մխիթարեան ուխտին պատկանող կաթոլիկ հայերի քահանան, հայր Ղազարը, Թողեց Թիֆլիսը և հեռացաւ Ղրիմ։

Կաթոլիկ հայերին որոնք կամենում են պահպանել իրանց եկեղեցու մէջ իրանց ազգային, մայրենի լեզուն կը մնայ միայն նոյնը անել, ինչ որ արել են մեր քաղաքի լատինական, օտարազգի կաթոլիկները, ֆրանսիացիները, իտալացիները, լեհացիները ու գերմանացիները, այն է Թոյլտուութիւն խնդրել իրանց սեփական աղօթատուն կառուցանելու, միջոցներ ժողովել և իրագործել իրանց մտադրութիւնը։

Մենք հաւատացած ենք որ նրանց չեն պակասի նիւթական միջոցները այս բարի գործի համար, մենք հաւատացած ենք որ և հայ լուսաւորչականները իրանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԻՆԸ

«Կինը է այն առանցքը, որի չուրջը պտըտվում է քաղաքակրթութիւնը»

Ամուսնութեան առաջին տարիներում հարսի գործունէութիւնը աւելի սահմանափակվում է տնային տնտեսութեան նեղ չրջանում, նրան խիստ սակաւ են դուրս թողնում։ Եթէ նա այգին, պարտէզը կամ դաշտն է գնում, միշտ պառաւ սկեսուրը կամ մեծ հարսներից մէկը իր հետն են լինում։ Այսպիսի հանգամանքներում հասկանալի է մանկահասակ հարսի բարոյականութիւնը։ Այս ասելով ես նպատակ չունեմ պաշտպանել այն միտքը, թէ հարեմական դրութիւնը կարող էր բարոյականութիւն պահպանել։ Բայց մի և նոյն ժամանակ պէտք է նկատել, որ սիրահարութիւնների համար բաւական ժամանակ և ազատութիւն հարկաւոր է, որոնցից զուրկ է գիւղացի կինը։ Ցոփացած և միշտ աչխատող մարմինը հեչտասիրութիւն չէ զգում։ *) Գիւղերում կինը այնքան սեղմված է, որ ոչինչ ծաղկ չէ մնում։ Կնոջ մի համարձակ նայուածքը, մի բառը օտար տղամարդի հետ, իսկոյն բամբասանքի առարկայ է դառնում։ Ամուսնական անհաւատարմութիւնը խիստ հազուագիւտ է գիւղերում, և թէ լինում են օրինակներ, պատժվում են մահով. խանդոտ տղամարդը ծածուկ կամ յայտնի սպանում է նրան, և հասարակաց կարծիքը արդարացնում է այդ եղեռնագործութիւնը։ Իսկ եթէ ամուսինը համբերում է կնոջ անառակութիւնը, նրա ընտանիքը դուրս է ձգվում գիւղական հասարակութիւնից։ Դրանք զեռեղվում են քաղաքներում։ Պէտք է յիշել և այն, որ գիւղացի կինը սիրել չը գիտէ. նա միշտ երկու ծայրերի վրա է կանգնում, կամ լինում է հասարակաց կին, կամ իր ամուսնի կինը.—սիրականներ պահելու նա ոչ չնորք և ոչ յարմարութիւն ունի։ Նրա յարաբերութիւնները իր տղամարդի հետ նոյնպէս չէ կարելի ասել, թէ սիրային բնաւորութիւն ունեն.—որպէս նրա ձեռքերը կոչտացել են աչխատութեան մէջ, այնպէս էլ սիրտը կորցրել է իր զգայականութիւնը։ Դուք չէք տեսնի գիւղացի կնկան, որ նա մինչև անգամ իր չատ մերձաւոր բարեկամուհիների մօտ խօսէր ամուսնի վրա։ Երբ նրա մասին խօսք է բացվում, կինը համարձակութիւն չունի նրա անունը անգամ բացարձակ կերպով արտասանելու, այլ միշտ գործ է ածում «նա» դերանունը, կամ այսպիսի խօսք՝ «Աստիճանի հայրը», դրանով հասկանում են որ իր մարդուն է ակնարկում, որովհետև Աստիճանը նրա որդին է։

Բայց պէտք է նկատել և այն, որ բարքերի մաքրութիւնը առաւելապէս պահպանվում է այն գիւղերում, որոնք հեռու են քաղաքներից և որոնք մեծ ճանապարհների վրա դրված չեն։ Օտար ազգերը մոցրին մեր գիւղերում և օտար մոլութիւններ, որոնք առաջ ծանօթ չէին։ Այն օրից, որ գիւղերում յայտնվեցան գինեվաճառի դուքաններ անբարոյականութեան ժանտախտը տարածվել սկսեց, թէև ոչ ոք չէ տեսել, որ գիւղացի կինը մտներ դուքանը խմելու համար, կամ արբած և ընկած լինէր փողոցում։ Բայց դուքանները, քաչում են դէպի գիւղերը այնպիսի օտար և խորթ հասարակութիւն, որոնցից մեր կանայք լաւ բան սովորել չէին կարող.... Եւ այդ անբարոյականացնող հիմնարկութիւնները լինում են միայն մեծ ճանապարհների վրա եղած գիւղերում։

Ես եղել եմ Պարսկաստանում և Տաճկաստանում, այնտեղի գիւղացի հայ կանայքը համեմատաբար աւելի բարոյական են, քան թէ այս տեղինները։ Ինչով մեկնել այս երևոյթը։ Իմ կարծիքով ուրիշ պատճառ չը կայ, քան թէ այն, որ այնտեղ հայը կարողանում է պահպանել ընտանեկան մաքրութիւնը իր վաղեմի սրբութեան մէջ. թէև լինում են մահմետականների կողմից առևանգութիւններ, բռնաբարութիւններ, բայց այդ դէպքերը աւելի առիթ են տալիս պահպանելու կնոջ անմատչելութիւնը։—Բռնութիւնը առաջ է բերում ինքնապահպանութիւն, իսկ վտանգաւոր է այն ազատութիւնը, որ իր հետ բերում է բարքերի ազականութիւն։ Այստեղ այդ կրիզիսի մէջն է գտնվում հասարակութիւնը։

Ես այժմ դառնում եմ դէպի կնոջ աչխատութիւնը, թէ ինչով է օգնում նա տղամարդին գիւղատնտեսական գործերում։ Ընտրահարսի աչխատութիւնները աւելի թեթև են լինում, համեմատելով հասակ առած կնիկների աչխատութեան հետ։ Պառաւ սկեսուրները նրանց չատ չեն նեղացնում դրսի գործերով, և աւելի բանեցնում են տնային տնտեսութեան մէջ։ Այդ յառաջ է գալիս մասամբ այն սովորութիւնից, որ մանկահասակ հարսին իսկոյն դուրս թողնելը կարող էր ընտանեկան ազդեցութիւն ունենալ նրա վարքի վրա։ Այստեղ կանանց աչխատութիւնները ամեն տեղ մի և նոյնը չեն, նրանք փոխվում են, նայելով տեղային պահանջներին։ Այն գիւղերում, ուր բամբակի մշակութիւն կայ, օրինակ, Երևանի նահանգում, կնիկները բոլորովին խեղդված են աչխատութիւններով, բամբակի մշակութեան մեծ մասը նրանց վրա է, «քաղհան» են անում, հաւաքում են հասունացած կօզակները, մաքրում են բամբակը կեղևից և կորիզներից, նրանից թել են մանում և այլն։ Այն գիւղերում, ուր այգեգործութիւնը զարգացած է, կնիկները գործ ունեն. պտուղներ հաւաքելը, չորացնելը, խաղողի քաղելը, բոլորը նրանց գործն է։ Ագարակային բերքերի, պարտէզների, բանջարանոցների մշակութիւնը նոյնպէս կնոջ գործ է։ Կինը չէ մասնակցում միայն մանգաղի, բահի և արօրի գործածութեան մէջ։ Տեղերի յարմարութեան համեմատ, կնոջ աչխատութիւնը աւելի բարդվում է և բազմատեսակ է դառնում։ Մեր գիւղացին ծոյլ չէ և ոչ տգէտ, նա չէ բաւականանում գիւղատնտեսութեան մի ճիւղովը միայն, երբ հող ունի և տեղային պայմանները ներում են, նա ընդարձակում է իր տնտեսութիւնը. մի և նոյն ժամանակ նա երկրագործ է, ցանում է ցորեան, գարի, կտաւատ, քունջութ, կանեփ, դեղչակ և այլն, և մի և նոյն ժամանակ այգեգործ է, գինեգործ է, անասնապահ է,—այդ

*) Բացի դրանից, ընտանիքը այնպիսի խիստ բարոյական և հաստատուն հիմունքների վրա է կազմված, որ կինը չէր կարող թեթև վարքի տէր լինել։

ՎԱՂՎԱ ՏԵՂԱՑԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վաղուայ առաւօտ կանուխ ես ու հայրս ճամբայ ելանք Ալաշկերտի դաշտի կողմերը։ Ես ինձ համար ձի էի հեծել, իսկ հայրս ոտքով էր գնում։ Ես ուզում էի, որ հայրս էլ ձի հեծնի, բայց նա ասաց, որ ինքը ոտքով ուզում է գնալ, որովհետև ոտքով գնալը առողջութեան համար շատ օգտակար է։ Ես էլ ձին քշեցի առաջ։ Ճանապարհին հանդիպեցանք մի քանի ձիաւորների, որոնք ինձ ասացին, որ Ալաշկերտի դաշտում շատ ձիեր կան, որոնք ծախու են։ Ես ուզում էի մի լաւ ձի գնել, որ հետո վաճառեմ։ Ես ուզում էի ձիերի առուտուրով զբաղուել։ Ես ուզում էի ձիերի առուտուրով զբաղուել։ Ես ուզում էի ձիերի առուտուրով զբաղուել

ՏՐՎՈՒՄ, 7/19 մայիս։ Ֆրանսիայի Սենատը այսօր ընդունեց Ֆերրիի կառավարության առաջարկությունը՝ Փարիզի շրջակայքում 200 մղոն շրջանակում 237 ֆորտեր կառուցելու մասին։ Ծախսերը հաշվարկված են 100 միլիոն ֆրանկ։ Մոտավոր 1 մղոնի երկարությամբ 96 բ. 25 կ. Մոտավոր 1 մղոնի երկարությամբ 93⅛ բ., ամեն 8 բ. 11 կ. միջնորմ 94 բ., միջնորմ 235 բ. 50 կ., ամենամեծ ամրացված միջնորմ 210 բ., միջնորմ ընդհատ ամրացված 5⁰/₀ ուռուցիկ փոսով 95 բ. 50 կ., բոլորովին ամրացված 95 բ. 75 կ., ներքին ամրացված 5⁰/₀ ուռուցիկ փոսով 96 բ. 50 կ., միջնորմ 96 բ. 50 կ., երկաթուղային գծերի ամրացման համար 6-ոյն նիստում մեծ քննարկումներ եղան։ Ընդունվեց, որ Փարիզի ամրացման համար հատկացվի 6 միլիոն ֆրանկ։ Ընդհանուր ծախսը հաշվարկված է 100 միլիոն ֆրանկ։

Խմբագիր — Հրատարակիչ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՑ

ՀԱՅԿԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ՏՈՒՓԱՔԱՐՏ

Ամենայն նկատողություններ հեռագրական գործերի վերաբերությամբ պետք է ուղղել Տփղիսի գլխավոր հեռագրատան պետին։

Ամենայն նկատողություններ փոստային գործերի վերաբերությամբ պետք է ուղղել Տփղիսի գլխավոր փոստատան պետին։

Ամենայն նկատողություններ «Մշակի» բաժանման վերաբերությամբ պետք է ուղղել «Կերբոտոպոլ» գրավաճառանոցին Տփղիսում։

Ամենայն նկատողություններ «Մշակի» տպագրության վերաբերությամբ պետք է ուղղել տպարանի տնօրենին։

Ամենայն նկատողություններ «Մշակի» խմբագրության վերաբերությամբ պետք է ուղղել խմբագրին։

Ամենայն նկատողություններ «Մշակի» հրատարակության վերաբերությամբ պետք է ուղղել հրատարակչին։

Ամենայն նկատողություններ «Մշակի» գրավաճառանոցների վերաբերությամբ պետք է ուղղել գրավաճառանոցների տնօրենին։

Ամենայն նկատողություններ «Մշակի» գրավաճառանոցների վերաբերությամբ պետք է ուղղել գրավաճառանոցների տնօրենին։

ՀԱՅՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԱՐՎԵՍՏԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

Ի ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ

Ի ՀՐԱՏԱՐԱԿՉԻ

Ի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԹԵՐԹԻ

ԽՄԲԱԳԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՑ

ՏՓԽԻՍ

Տպարան Ա. Պետրոսեանցի, Ալեքսանդրովսկի փող., № 6-ին տան։

1879

ՄՇԱԿ

ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ ՏՈՒՓԱՔԱՐՏ

Ամենայն նկատողություններ «Մշակի» բաժանման վերաբերությամբ պետք է ուղղել «Մշակ» գրավաճառանոցին Տփղիսում։

ԲԱՑԱԿԱՆ

Ի ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԱՐՎԵՍՏԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

Ի ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ

Ի ՀՐԱՏԱՐԱԿՉԻ

Ի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԹԵՐԹԻ

ԽՄԲԱԳԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՑ

ՏՓԽԻՍ

Տպարան Ա. Պետրոսեանցի, Ալեքսանդրովսկի փող., № 6-ին տան։

1879

ՄՇԱԿ

ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ ՏՈՒՓԱՔԱՐՏ

Ամենայն նկատողություններ «Մշակի» բաժանման վերաբերությամբ պետք է ուղղել «Մշակ» գրավաճառանոցին Տփղիսում։

ԲԱՑԱԿԱՆ

Ի ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԱՐՎԵՍՏԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

Ի ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ

Ի ՀՐԱՏԱՐԱԿՉԻ

Ի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԹԵՐԹԻ

ԽՄԲԱԳԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՑ

ՏՓԽԻՍ

Տպարան Ա. Պետրոսեանցի, Ալեքսանդրովսկի փող., № 6-ին տան։

1879

ՄՇԱԿ

ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ ՏՈՒՓԱՔԱՐՏ

Ամենայն նկատողություններ «Մշակի» բաժանման վերաբերությամբ պետք է ուղղել «Մշակ» գրավաճառանոցին Տփղիսում։

ԲԱՑԱԿԱՆ

Ի ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԱՐՎԵՍՏԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

Ի ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ

Ի ՀՐԱՏԱՐԱԿՉԻ

Ի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԹԵՐԹԻ

ԽՄԲԱԳԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՑ

ՏՓԽԻՍ

Տպարան Ա. Պետրոսեանցի, Ալեքսանդրովսկի փող., № 6-ին տան։

1879

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1879 Թուին

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՇԽԱՏ ՕՐ, բացի տոն և տոներին հետեւեալ օրերից։

Լրագրի գները և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «Մշակի» տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարուանը 6 րուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԹՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ՈՒՆԵՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը.

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ Հ.ՊԱԽՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ՋԷԼՕՔԱՆԻ ԱՐՈՒՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷՔԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԻՃՕՄԸՆ—ՀՆԻՆԳ

ծախվում է ՇԷՕՆԻՆԳԻ ՊՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵ ՔԱ ԼԱՔԻՔ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԵԿՈՎ։

Լոյս տեսաւ «ՓՈՐՁ» ամսագրի
Երրորդ (մարտի) տետրը՝

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. I. Հայի խնդիր. վերաբնութիւն Պերճ Պռօշեանցի, II. Հին պատակութեան և նորի գաղափարը նախնի հայոց մէջ, Կ. Կոստանեանց, III Մի ևրես կարնոյ նորագոյն պատմութիւնից, Ա. Երիցեան, IV Սիրոյ զոհեր, բանաստեղծութիւն Գամառ Քաթիպայի, V Մի Լեհացի Սաւօնարօլ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ VI Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան, տիկին Սրբուհի Երիցեան, VII անեկդօտներ, ժողովածու Գալուստ Շիրմազանեանի, Գրիչ. VIII Միհրդատ Ամերիկեան, կենսագրութիւն, Գ. Շահկեանց, ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Արևելեան խնդիրը և հայերը, X Ներսէս պատրիարգի կոնդակը։ ՅԱՒԵԼՈՒԱԾ XI. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, Ա. Բաբայեան, XII յայտարարութիւններ։

Տորադրուել կարելի է թիֆլիսում՝ «Փորձի» խմբագրատանը և կենտրօնական գրավաճառանոցում։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետեւեալ հասցէով։

Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала „ПОРДЗЪ“.

Խմբագիր—հրատարակիչ Աբգար Յովհաննիսեան

ՌՈՒՍԱՑ ԹԷՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻՑ նոր ստացվեցան 10000 Փունտ Ֆուչանի և կնախի թէյ սեփական փոխանակութեան 1 ր. 20 կ. մինչև 8 ր. Փունտը։ Ֆուչանի թէյի համար ինձանից գնողներից շատերը նամակներով շնորհակալութիւն յայտնեցին, յոյս ունեմ ապագայում գնողներից նոյնպէս ստանալ։ Ծախվում է մեծ քանակութեամբ և փոքր։ Փօստայի ծախսը ինձ վրա առնում եմ։ Հասցէն Մելքայէլեան կամուրջ, «Кавказъ»-ի համբարատան տակ։ Վաճառական Ա. Պօղոսեանից։

5—10

ԵՐԵՒԱՆՈՒՄ Աստաֆիեվսկայա փողոցի վրա, քաղաքի կենտրօնում ձեռնատու գնով ՏԱՒՐՈՒՄ Է քարից և կրից շինած մի ՏՈՒՆ։ Տան մէջ կան տաս ԽԱՆՈՒԹՆԵՐ ամբարատեղիներով, սառուցատուն և երեսուն և չորս ՍԵՆԵԱԿ ծառաների բնակարաններով և պատշգամով տան ամբողջ երկայնութեամբ։ ԲԱԿԻ մեծութիւնը 2000 քառակուսի սաժէն է, բակի մէջ ԱԻԱԶԱՆ կայ։ Տան դիմացի կողմի ԵՐԿԱՑՆՈՒԹԻՒՆԸ 63 արշին է, իսկ ԼԱՅՆՈՒԹԻՒՆԸ նոյն կողմից 24 արշին։ Ամբողջ տունը տարեկան 5600 ր. ԵԿԱՄՈՒՏ է տալիս։ Ցիշեալ տունը գնել ցանկացողները կարող են դիմել երևան տան տէր Աբրահամ Պապիկովին։ Նոյն տան մէջ ցանկանում են յանձնել մէկ ուրիշ ՔԱՂՑՐԵՂԵՆՆԵՐԻ ԹԱՆԻԹ, պիտանի բոլոր պարագաներով։ ԱՐՏԵՄ ՊԱՊԻԿԵԱՆՑ։

1—4

ԿՕՐՇԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԵՐԹԵՒԵԿ պարապատում է երեխաներին ՄԻՋՆԱԿԱՐԳ բոլոր ուսումնարանների ՓՈՔՐ ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻ համար։ ՁԱՇԻՑ 66-ՏՈՑ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ։ Ֆրանսիերէն և գերմաներէն լեզուների գործնական և տէօրետիկական դասեր են տրվում։ Ուսումնարանը գտնվում է Վօրօնցօվսկայա Նաբերեժնայա փողոցի վրա, Բելևաեվի նախկին տանը, № 19.

2—3

ՍԵՆԵԱԿՆԵՐ քրէհով են տրվում կահկապահքով և ծառայով 10 ր. մինչև 20 րուբլ ամսական վճարով։ Հարցնել Սապէօրնայա փողոցի վրա գինուորական գիմնազիայի դիմացը Յարութիւնեանցի № 12 տան մէջ։

1—3

Ազդ

Գառնիկ Ալէքսանեան Յարութիւնեան, որը մականունը Սարքեան Սիմասցի. Կ. Պոլիս Բերայի թաղը ծնած, 18—20 տարեկան, արհեստը գրաշարութիւն, ինքը բարձրահասակ, երկու տարի է որ անզգեստի վաճառականի մը հետ ասկէ (Պոլիսէն) եկած շոգենաւով Փոթի երթալու, և անկէ ալ Թիֆլիս անցնելու նպատակաւ ճամբայ ելած օրէս մինչև յայսօր և ոչ մի լուր առնուած է. հայրը մեռած է և մայրը և քոյր մը ունի. ով որ տեսած է յիշեալ երիտասարդը, մարդասիրաբար ազգային լրագրաց իմաց տալու շնորհի ընելը կաղաչուի։

«ՆՈՒԷՐ ՔԱՍԻԲ ԳԵՂԵՑԻՆԵՐԻՆ» անունով նոր գործս եկած բրօշիւրը ծախվում է հատը 15 կոպէկով Թիֆլիսի կենտրօնական և Զաքարիայ Գրիգորեանի գրավաճառանոցներում։ Հարիւրով առնողներին կը լինի 20% զեղջում, եթէ անմիջապէս դառնան դէպի մեզ այս հասցէով. Тифлисъ Григорію Теръ-Меликсетову. въ Сололакахъ, на Сололакской улицѣ, у Вознесенской церкви, въ д. Михаила Галустова, подъ № 110.

Գրիգոր Տէր-Մելիքսեդեկեան։

Բժիշկ Աւետիք Բաբայեան (Բաբայեվ) ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ցորեկ ժամին և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու։ Բացի այդ բժիշկ Բաբայեան (Բաբայեվ) հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցող կամ էլեկտրականութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին։ Հասցէն Սերգիեվսկայա փողոց, տան Բայանդուրովի։

5—10

ԼԱՐՇԻ խանութում Գօլովինսկի հրապարակի վրա № 11 ծախվում են ամեն տեսակ թէ պարափշային և թէ ծաղիկների ՍԵՐՄԵՐ, որոնք նոր են ստացված և բոլորովին թարմ են։

3—10

Въ Кукахъ, на Исарловской улицѣ въ домѣ № 9 ОТДАЕТСЯ ОДНА БОЛЬШАЯ СВѢТЛАЯ КОМНАТА съ отопленіемъ и прислугой. Спросить въ редакціи «МШАКЪ»

ԿՈՒԿԻԱՅՈՒՄ, Իսարլօվկայա փողոցի վրա № 9 տան մէջ քրէհով է տրվում մի ՄԵԾ, ԼՈՒՍԱՒՈՐ ՍԵՆԵԱԿ վառելիքով և ծառայով։ Հարցնել «Մշակի» խմբագրատանը։

1—10

ՄԱՐՏԻ 9

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Մարտի 8-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը	8	58
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1240	—
Վիքրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիքրիչնի »	229	—
Մարսելի կուրսը 248 —	100	—
Լօնդոնի կուրսը Օդեսայի վրա.	105	19
Վէնայի կուրսը ածէ 113 գ.	100	—
Փաւրեթի բարաթը. . .	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փոթի թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօկու . .	7	30
» միւս տեսակը.	7	20
» չաքար աւազը.	5	40
» տրանզիտը.	6	20
» մաքսը վճարած	12	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. .	7	60
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուշի . . .	7	50
» թարագամի .	4	20
Ալիւրը Շարագլու .	1	70
» Երևանի. . .	—	—
Գարին	1	—
Մոմը քնաճարպի (стеар.)	12	60
Մետաքսը Նուխայ . .	200	—
Կախեթուընը. . . .	140	—
Կոկոնը Նուխայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լաստը) Ագուլեաց	55	—
Օֆէն մօկօր. . . .	27	—
» Իանի . . .	22	—
» Մարտինկօյին	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մինդկաների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 րուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական։

Երեխեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕՓԻ-ԹԻՖԼԻՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից .	9. 21	5. 18
Գօրի . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Րիօն . .	6. 47	
Փօթի . .	9. 40	

	առաւօտ.	
Փօթիից .	9. 13	
Րիօն . .	12. 13	
Միխայլօվօ.	5. 39	1 37
Գօրի. . .	7. 5	4. 8
Թիֆլիս. .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Րիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հատարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բացուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելոկլիւչի տրակտից երեքշաբթի և շաբաթի։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կօպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիչեվ և Գօրաւեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակատ վէներական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիչեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ կուրծքի և ներվային հ., Ա. Բախտաւով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակատ վէներական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիչեվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային հ., Ա. Բախտաւով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիչեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ վեներականկաշու հ., Բէյլս աչքի հիւանդութիւններ

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԵԿԱՆԼԵԱՒ. **. Նամակից լուր քաղեցինք։ «Մշակ» կուղարկենք։

—ԽԱՐԿՕՎ. Ա. Այդ նամակը հետաքրքիր չէ կարող լինել մեր ընթերցողների համար, մանաւանդ որ հնացած էլ է։

—ՆՈՒԽԻ. **. Ասացէք խընդրում ենք, ինչ յարաբերութիւն կայ Մակ-Մահոնի, Բիկօնսֆիլդի, Բիսմարկի և Նուխու աւազակների մէջ։ Բացի այդ կըտորը մնացածը կը տպենք։ Շարունակեցէք գրել. նամակները վատ չեն։

—ՇԱՄԱԽԻ. ***. Ճշմարիտ է ձեր քաղաքի մէջ կատարեալ մեռելութիւն է տիրում։ Գուցէ անդադար երկրաշարժներից է։ Աւսում են, որ ձեր քաղաքացիք լրագրի տեղ նպաստակների և մկների պատմութիւններ են կարդում։

—ՄՕՋՂՕԿ. Հ. կարդացէք վերևի պատասխանը։

Дозволено Цензурою 8 Марта 1879 г. Тифлисъ

Տպարան Ց. Մարտիրոսեանցի

Типографія Мартиросіанца